№ 16 Յունվարի 30 (Փետրվարի 11) 1881 Յունվարի 30 (Փետրվարի 11) № 16

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Բաժանորդագրողները դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"
ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
1881 թուին
(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ծրագրով և նոյն պայմաններով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևեալ օրերից):

ԾՐԱԳԻՐ. I. Տեղական հաղորդագրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և մատենագրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ ընկերութիւն.—Ներքին տեսութիւն. Հայ մանկավարժներ.—Արտաքին տեսութիւն. Ֆրանսիա. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Մոսկվայի Հնագիտական ժողովը.

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Մենք «Մշակի» № 14-ի մէջ տպեցինք պ. Մ. Փորթուգալեանի հրաւէրը դէպի ռուսահպատակ հայերը օգնել նիւթապէս Թիւրքաց Հայաստանի մէջ Կ. Պոլսի միացեալ ընկերութիւնների ձեռքով հիմնված դպրոցներին: Մեր լրագրի ուրիշ համարում տպեցինք նոյն իսկ «Միացեալ ընկերութեան» խորհրդի հրաւէրը նոյն առարկայի մասին:

Այժմ մեր ռուսահպատակ հայերի ուշադրութիւնը հրաւիրելով այդ յօդուածների վրա, կը կամենայինք մեր կողմից էլ մի քանի խօսք աւելացնել:

Ճշմարիտ է վերջին ժամանակ նուէրները «Միացեալ ընկերութեան» պակասել են զգալի կերպով: Բայց այդ երևոյթը մենք պէտք է վերաբերենք այն բանին, որ ռուսաստանցի հայերս վերջին ժամանակ աւելի ուշադրութիւն էինք դարձրել Հայաստանում տիրող սովի վրա և ջանում էինք մեր սոված եղբայրներին օգնել:

Ի հարկէ չէ կարելի ասել հաստատապէս որ սովը կատարելապէս անցել է, և եթէ մասամբ անցած էլ լինէր, դարձեալ չը պէտք է մոռանալ որ ամեն երկրում սովի հետևանքները շատ անգամ նոյնչափ և գուցէ աւելի աւերիչ են լինում, քան թէ նոյն իսկ սովը: Սովից յետոյ միշտ սկսում են տիրել հիւանդութիւններ և աղքատութիւն, աշխատանքները դադարում են, ժողովուրդը յուսահատութեան մէջ է ընկած լինում:

Այդ տեսակ դրութիւն շատ անգամ տարիներով է շարունակվում:

Նոյն իսկ այդ տեսակ անորոշ և ընկած դրութեան պատճառով երկրի դպրոցական գործն էլ քիչ թէ շատ արհամարհված դրութեան մէջ է լինում միշտ:

Բարձրացնել դպրոցական գործը Թիւրքաց Հայաստանում, նրան կրկին մի զօրեղ, կենդանի զարկ տալ, կրկին սիրտ և հոգի տալ մեր Թիւրքահպատակ յուսահատված եղբայրներին, մեզ, ռուսաստանցի հայերիս կը պատկանի, մեզ, որոնք նրանց հետ համեմատելով շատ աւելի ապահով պայմանների մէջն ենք ապրում, Ռուսաստանի խաղաղ տիրապետութեան տակ:

Այդ պատճառով մենք էլ, միանալով «Միացեալ ընկերութեան» և նրա ներկայացուցչի ազգու հրաւէրներին, մեր կողմից էլ պարտաւորութիւն ենք համարում հրաւիրել մեր ռուսահպատակ հայերին կրկին օգնել նիւթապէս Թիւրքաց հայերի դըպ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

—

Մոսկվայի Հնագիտական ժողովի այս տարվայ երրորդ նիստը (22 դեկտեմբերի), չը նայելով իր բոլորովին մասնագիտական պրոգրամին, գրաւեց մեծ բազմութիւն ժողովրդի. մանաւանդ շատ կային հայ ուսանողներ, որոնք սովորաբար չեն յաճախում չոր գիտնական ժողովի նիստերին. Մոսկվայի հայ հոգևորականութիւնն էլ ունէր այս անգամ իր ներկայացուցիչները: Մենք կաշխատենք մի փոքր մանրամասն խօսել այս նիստի վրա, որովհետև՝ ինչպէս ընթերցողը կը տեսնի ներքև—այս երեկոյ միմիայն նոյնական երկնք էր՝ յայտնի բան է ծրագրի բովանդակութեամբ. Նիստի առարկաներն էին. 1. Հնագիտութ. ընկ. անդամ մեր գիտնական հայրենակից պ. Միրզայ Էմինի ընթերցանը—«Մարք (Մидия) Հին Հայաստանում և Փիւլ Օպպէրտի առած նոր մեկնութիւնը Աստիագ (Աժդահակ) բառին». 2. կոմս Ուվարովի ընթերցանը—«Էջմիածնայ Մատենադարանը»:

Նիստը բացեց ժողովի նախագահ կոմս Ուվարովը: Նա համառօտապէս պատմեց իր Կովկաս և Անդրկովկաս արած ճանապարհորդութեան մասին, խօսեց Թիֆլիսի նախապատրաստական նիստի վրա. (անցեալ նոյեմբեր 26-ին). մէջ ներկայացրած [illegible] գեղեցկանները, որոնք շատ հետաքրքրական նիւթ են կազմում կովկասի հնագիտութեան համար, և վերջը յայտնեց, որ Թիֆլիսում լինելիք հնագիտական ժողովը լինելու է ոչ թէ օգոստոսին, ինչպէս առաջ էր յայտնած, այլ 8 սեպտեմբերի սկսեալ 1881 թուին. Այնուհետև սկսեց կարդալ պ. Էմինը.

Մենք կաշխատենք «Մշակի» ընթերցողներին հաղորդութեան չափ ամփոփ տեղեկութիւն տալ այս հնագիտական ընթերցումների մասին, որ բաւականին երկար էր և որից մենք կը յիշենք ամենանշանաւոր տեղերը:

Հայերի յարաբերութեանց մասին, Մարաց հետ՝ ոչ Տիգրան Երուանդեանի ու Կիւրոսի ժամանակ (Քրիստոսից մօտ 600 տարի առաջ) և ոչ նրանցից յետոյ—ոչինչ տեղեկութիւն չենք գտնում Հերոդոտի և Կտեզիասի մօտ. Բայց չը նայելով նրան՝ Մովսէս Խորենացու պատմութիւնից իմանում ենք, որ Տիգրանի բոլոր իշխանութիւնը անցել է անդադար կռիւներով Մարաց Աժդահակի հետ, և հայոց Թագաւորը Կիւրոսի հետ դաշնակցելով, վերջապէս կործանում է Մարաց Թագաւորութիւնը.—Այս հայեացքը, ճշմարիտ է, շատ տարբեր է յունաց պատմիչներից, բայց դարձեալ ամենայնիւ ունի բաւական ծանրակշիռ պատմական հիմք, որի վրա մինչև այսօր ուշադրութիւն չեն դարձրել Եւրոպայի գիտնականները: Այդ հիմքը—ժողովրդական վիպասանութիւնն է. Մովսէս Խորենացին, քաջ ծանօթ լինելով Հերոդոտի և Դիոդոր Սիկիլիացու գրուածքներին—ուրեմն և նրանց կարծիքներին վերջին Մարաց Թագաւորի (Աժդահակի) վրա,—չը նայելով իր բոլոր սէրը դէպի յունականը, մի կողմն է թողնում այս պատմիչներին և բոլոր իր պատմական նիւթը [illegible] երգեր գործող Թագաւորների պատերազմի մասին—քաղում է ժողովրդական վիպասանութիւնից: Իր պատմութեան առաջին գրքում, որ բաղկացած է 32 գլխից, միայն 7 գլուխը Խորենացին նուիրում է Տիգրանի և Աժդահակի թշնամական յարաբերութիւններին.—Աչքի առաջ ունենալով իր ազգի վիպասանների, «որք բամբռամբ երգէին», նա առաջ քան պատերազմի պատմելը, գրաւիչ կերպով նկարագրում է Տիգրանի արտաքին և բարոյական յատկութիւնները առաջինեալ հանճարական ասացուածներով. «Հաւ (բարիք) գործեց մեր աշխարհին հանդէպ այս խօսքերով և գանգուրահեր Երուանդեան Տիգրանը—«Երենք գանեան և մեղուաւոր, ամենայն և թիկնավէտ, արագաստիւն և գեղեցկաւոր. պարկեշտ ի կերակուրս և ըմպելիս և ի խրախճանութիւնս արբենար...

մեծարանաւն և պերճապաշտ, և յանձնայոյս, որ ինչ մարդկութեան պիտանի...» (տես Խորենացու պատմ. գիրք ա. գլ. 24) Այսպիսի յետոյ նոյն իսկ վիպասանների երգերին հետևելով՝ Խորենացին այսպէս է շարունակում իր պատմութիւնը: Տիգրանի բարեկամութիւնը Կիւրոսի հետ մեծ վախենալ էր ազդում Աժդահակին. այդ վախերը աւելի ստուգելու նրա մի հրաշալի երազից յետոյ—Վ. Էմինը մի առ մի մէջ բերեց այս գեղեցիկ բանաստեղծական երազը, որի ամեն մի տողը շնչում է հայ վիպասանի վառ երևակայութեամբ. բայց մենք՝ տեղի պակասութեան պատճառով, բաց ենք թողնում այդ կտորը, մանաւանդ անհրաժեշտ հետաքրքիր ընթերցողին խորհուրդ տալով պատմութեան առաջին գրքի 24 գլխից սկսեալ մինչև 31 գլ.: Որպէս մի պատմեն իրանց Թագաւորին սպառնացող վտանգից. Աժդահակի խորհրդակիցները առաջարկում են, որ նա իրան կին խնդրէ հայոց Թագաւորի քոյրը—Տիգրանուհին, այն նպատակաւ, որ յետոյ այդ իսկ կնոջը գործիք շինեն Տիգրանին սպանելու: «Խորագէտ գեղեցկիկը», ինչպէս կոչում է Տիգրանուհուն վիպասանը, գալով Աժդահակի ապարանքը, իսկոյն հասկացաւ որա գիտաւորութիւնը և գաղտնի յարաբերութիւններով խնդրէ է տալիս իր եղբօրը Մարաց Թագաւորի դաւադրութեան մասին. Տիգրանը առնելով զօրքով յանկարծակի յարձակվում է Աժդահակի վրա և հինգ կռուի միջոցին նիզակով սպանում է նրան.—Այս է համառօտակի պատմութեան մէջ բերած վիպասանութեան բովանդակութիւնը. Բէ նա, չը նայելով իր վիպասանական ոճին, ունի իր մէջ պատմական ճշմարտութիւն, դրան ապացոյց կարող է լինել Մարաց գերութիւնը, որ պատմում են Հայաստանում խիսկոյն յիշեալ պատերազմից յետոյ: Տիգրանը՝ իր յաղթութիւնից յետոյ, գերի է տանում Աժդահակի բոլոր ընտանիքը—նրա կին Անոյշը և որդիները ու դուստրերը—և 10 հազար Մարք. որոնց բոլորին նա տեղաւորում է Արարատեան նահանգում—Տամբատ, Ողնիք, Դաշխուրի, Վրանջունիք, Նախիջեւան, Ջուղայ և Խռամ? շրջաններում գիւղերում և աւաններում. Աժդահա-

կի ցեղը երկար ժամանակ յայտնի էր հայերի մէջ «Վիշապք» կամ «Վիշապազունք» անունով. նոյն իսկ Մարացի իշխանները մեծ դեր էին խաղում Հայաստանում.

Այսպէս յիշվում է Մարաց դերից իշխան Արգամին (նոյնն է Արգաւան), որ հայոց Արտաշէս Բ. Թագաւորի ժամանակ (Թագ. 88—129 թ. Քրիստոսից յետոյ) երկրորդ մարդն էր Հայաստանում և որը իր բոլոր սերունդով զոհ գնաց արքայորդի Արտաւազդի թշնամութեան.—Այս բոլորը փաստեր են և պատմական փաստեր. դըրանցից պարզ երևում է, որ Մարաց բազմաթիւ գերութիւնը այն ժամանակ միայն կարող էր լինել, երբ ընդունենք, որ Աժդահակի սպանողը և Մարաց տէրութեան կործանողը Երուանդեան Տիգրանն էր և ոչ ուրիշ մէկը:

Այսպիսի յետոյ պ. Էմինը կարդաց Աստիագ բառի մեկնութեան վրա.

Անտեղի չենք համարի, ասաց նա, ներկայացնել այստեղ գիտնականների ուշադրութեանը Մարաց Թագաւոր՝ Աստիագի անուան մեկնութիւնը. Եւ այս մանաւանդ նրա համար, որ մի քանի ժամանակ առաջ յայտնի գիտնական և ասորական տառերի մեկնիչ Փիւլ Օպպէրտը նորից բարձրացրեց այս խնդիրը, որ վճռված էր համարվում. Անցեալ տարվայ վերջերին պ. Օպպէրտը հրատարակեց փարիզում իր «Le peuple et la langue des Mèdes» յօդուածը (Մարաց ազգը և լեզուն), որի երրորդ գլխի մէջ առաջարկում է մի նոր մեկնութիւն Աստիագ բառի. որ՝ մեր կարծիքով բաւականացուցիչ չէ. Յայտնի է, որ Մարաց վերջին Թագաւորի անունը, բացի հետևեալներից Աստիագէս ձևից, պատմում է յոյն պատմիչների մօտ այլ երկու ձևով—Աստիգէս և Աստիագաս. Պարոն Օպպէրտը՝ առանց քննելու՝ թէ որ լեզուին են պատկանում Աստիագէս և Աստիգէս բառերը, գիտակցաբար է համարում վերջինը—պարսկա ծանօթ ձևը—և ասում է, թէ սրան կարելի է մեկնել պարսից aristiyuga բառով, որ նշանակում է combattant avec des lances (այսինքն—«նիզակով պատերազմող» կամ «նիզակամարտ»).

բացական գործին, ասելի էլ և- ուսմունքը կերպով հաստատելով նուէրները յօգուտ «Միացեալ» ընկերութեան։

Մեր ազգի պէս մի ազգի դրութեան մէջ, ինչպէս շատ իրաւացի նկատել է պ. Փորթուգալեանը, ձգտել բարոյական փոխութեան կարելի է գլխաւորապէս դաստիարակչական գործին հաստատ կերպով նպաստելով, մանաւանդ երբ այն ընկերութիւնը, որ յանձն է առել այդ փրկարար գործը առաջ տանելու, չէ ձեռնարկում միմիայն նեղ, աղանդական, այլ լայն, մարդասիրական, ազգային հայեացքներով, ա զ գ բառով համակուած է ձգտումն այն մարդուն, որի երակների մէջ հայի արիւն է վազում, չը նայելով թէ այդ հայը Քրիստոսին, թէ Մահմեդին է պաշտում, հայ բառով համակուած է հայաստանցուն, նայում է Թիւրքաց Հայաստանի վրա, որպէս մի ամբողջութեան վրա, Հայաստանում բնակւող իւրաքանչիւր անհատի վրա նայում է որպէս հայաստանցու վրա, որի համար հայրենիքը Հայաստանն է և դպրոցական գործը համարում է մի հատիկ միջոց հայաստանցի այլ և այլ տարրերի մէջ հաստատ ազգային կապ հաստատելու համար, փախչելով այն ամեն միջոցներից և հայեացքներից, որոնք երկպառակութիւն սերմանելով ազգի տարբեր տարրերի մէջ, ջլատում և անզօրացած են անում ազգի ընդհանուր առաջադիմութիւնը։

Որքան օգնենք «Միացեալ ընկերութեանը» քանի նա միակ ընկերութիւնն է ազգի մէջ, որ հասկացել է ժամանակի ոգին, հաստատ քայլերով և որոշ պրօգրամայով առաջ է գնում, առանց դիմակի, նախապաշարմունքի և կեղծաւորութեան, միմիայն ազգի ընդհանուր բարօրութիւնը իր համար սուրբ նպատակ դրած լինելով։

Քանի որ մենք ինքներս դեռ ընդունակ չենք անել այն ինչ որ անում է Կ. Պօլսի ընկերութիւնը, գոնէ օգնենք նրան նիւթապէս։ Դա ամենափոքր բանն է, որ մենք կարող ենք անել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐԸ

—

„Մշակ" լրագիրը իր համարներում բարձրացրել է մի կարևոր հարց, որ մեր ազգային կեանքի համար, պարզապէս մեծ նշանակութիւն պէտք է ունենայ, այն է „հայ մահմետականների հարցը". Շատերն ապրելով հնաւոր քաղաքներում և յարաբերութիւն չունենալով մահմետական գիւղացիների հետ, զարմանում են, երբ նրանց ասում են թէ կան այժմ քարեր և [illegible] մահմետական հայեր էլ.

Պէտք է միայն ծանօթանալ, մտնել նրանց տները, երկար ու բարակ զրուցել նրանց հետ, հարցնել նրանց անցեալը, հարց ու փորձ անել նրանց ազգականների, նրանց պապերի և մեծ մայրերի մասին, այն ժամանակ կը տեսնէք, որ այդ մահմետականներն իրանց բերանով կասեն ձեզ, որ նրանք հայի սերունդ են։

Գաւառական յանձնարարութեամբ, ես երեք շաբաթ շարունակ ճանապարհորդելի Դարալագեազի (Վայոց Ձոր) սարերում և համոզվեցի, որ „Մշակի" արտայայտած մտքերը, հայ մահմետականների վերաբերմամբ, բոլորովին ճիշտ են։

Ճանապարհորդութեան ժամանակ առիթված էի լինում երբեմն իջևանել և գիշերն անցնել մահմետականների գիւղերում և զրուցել նրանց հետ։ Շատ մահմետական գիւղերում կը տեսնէք հին հայոց եկեղեցի և գերեզմանատուն։ Գիւղացոց խօսակցութիւնից երևում է, որ նաև նրանց պապերը այդ գիւղումն են ծնվել, որ դրանց ազգականները, հարևանը որդիքը կամ թոռները բնակվում են մօտակայ գիւղերում և հայ են։ Դրանցից շատերն իրանց ինձ ասում էին, որ իրենց պապը կամ մեծ մայրը հայ է եղել, և այս բացէիս ունեն հայ ազգականներ, որոնց հետ բարեկամական և ազգական յարաբերութիւններն անխախտ են։

Այդ մահմետականներից շատերն այնպէս մաքուր հայերէն են խօսում, որ նոյն թուրքի առոգանութիւնը չէ նշմարվում, այն ինչ քաղաքացիական թուրքերը, որ պարսիկների Թագաւորներն են, ինչքան էլ լաւ խօսեն հայերէն, այնու ամենայնիւ առոգանութիւնից երևում է, որ հայ չեն։

Ամենայն ազգ ունի իր յատուկ գէմքը, երևակ գծագրութիւնը և արտայայտութիւնը, բայց շատերն ասում են, որ եթէ [illegible] դարեր շարունակ միասին, մի հողի վրա են ապրում, գէմքով չեն զանազանվում միմեանցից. այդ կարծիքն ս- ղեղ է, բայց ով և որոշիր թէ երկու ազգ քանի՞ հարիւր տարի պէտք է մի հողի վրա ապրեն, որ միանմանութեան հասնեն։ Այդ ժամանակամիջոցը ես որոշել չեմ կարող, բայց կասեմ, որ թէպէտ քաղաքացիական պարսիկները դարեր շարունակ ապրում են հայոց հողի վրա և հայոց հետ, այնու ամենայնիւ գեռ հայերից շատ տարբեր գէմք ունեն։ Պարսիկին կարելի է ճանաչել նաև, եթէ նա իր մազերը, շորերը հայոց կերպ փոխի, իսկ եթէ նա մի հայերէն բառ արտասանեց, կը մատնէ իրան։

Գնացէք, քննեցէք գիւղական մահմետականին և կը տեսնէք, որ նրա բարբառը չունի այն հնչիւնները, որ յատուկ են պարսիկին, այդ զանազանութիւնը չը կայ հայ գիւղացու և հայ քաղաքացու մէջ. թէպէտ և սրանք զանազան բարբառներով են խօսում, բայց հնչիւնները մի և նոյնն են։ Գիւղական թուրքի գէմքը շատ տարբեր է քաղաքացիականի գէմքից. այդ տարբերութիւնը առանձին կերպով նշմարվում է երբ գիւղական թուրքը հայի պէս է հագնվում և մազերը հայի կերպ է խուզում, այդ դէպքում անկարելի է զանազանել գիւղական թուրքին հայից։ Այս իմ վերջին զանազանութիւններս կարող են լոկ անհիմն կարծիքներ համարվել, բայց դրանք աւելացվում են, երբ մահմետականն ինքը իր բերանով ասում է, որ նրա պապերը հայեր են եղել, որ նրա հայ ազգականները մօտակայ գիւղումն են ապրում։ Մի՞թէ աւելի ճիշտ ապացոյցներ էք կամենում ունենալ, որ կան հայ մահմետականներ։

Կրօնական կէտից նայելով, ես կարող եմ նմանապէս ապացոյցներ բերել, որ կան հայ մահմետականներ. Եկեղեցական տօները կատարվում են գիւղերում ամենաճիշտ կերպով. Հայերը հնաւոր տեղերից թափվում են փոխնի գուռը, դրանց հետ կը տեսնէք շատ [illegible]

Ալիշանեան, համոզված լինելով իր մեկնութեան ճշմարտութեանը, նա յառաջ է գնում, ասելով— «Les arméniens, qui puisaient l'histoire orientale en majeure partie aux sources grecques, ont changé le nom A s t y a g e en A z d e h a k...» և այլն. «Հայերը (այսինքն հայ պատմիչները), որոնք քաղում են արևելքի պատմութիւնը մեծ մասամբ յունաց աղբիւրներից, փոխել են Աստիագ անունը Աժդահակի...»։ Զարմանալի կարծիք։ Ինչու հայերը ս տառը պէտք է ժ փոխէին, քանի որ նրանք այդ տառը ունեն. և ինչ ապացոյցներ կան դրան։ Ընդհակառակը՝ յունաց աղբիւրում չը կայ ժ տառը և այս պատճառով բոլոր արևելեան անունները ժ տառով նրանք փոխել են ս-ի և Աժդահակից էլ—Աստիագէս են փոխել (ինչպէս որ Արտաշէսից—Արտաքսերքսէս)։ Եւ ինչու էր պէտք պ. Օպպերտին ասել, թէ «հայերը, որոնք քաղում են»... և այլն և այլն. այդ «հայերը», միակ Մ. Խորենացին, որ հենց այս գլխում, հենց Աժդահակի պատմութիւնը քաղում է ժողովրդական երգերից և ոչ թէ յունական աղբիւրներից։ Բայց դրանից հայոց ընդունած այնքան յարմարութիւններ ունի, որ թէ յոյն և թէ պարսից բանաստեղծական աւանդութիւնները չէին կարող պատահել—Աշէ և երկրորդ ապացոյցը, որ Մարաց վերջին թագաւորի անունը Աժդահակ էր և ոչ Աստիագէս [illegible]

[illegible] տարածված է Զէնդի Մ ա ր ա բառին, որ նշանակում է օձ.

Այս հետևութիւններով մենք չենք կարող համաձայնել գիտնական Օպպերտի հետ, որ պնդում է, թէ Աստիագէս բառը պէտք է կարդալ Արշտիուէգա—որ նշանակում է ձեռքանետ մարդ և այլն.

Արանով վերջացրեց պ. Էմինը իր հետազօտական ընթերցումը.

—

Յառաջ քան այդ ընթերցումը [illegible] Ոսկանիան [illegible] կերպով նկարագրեց Էջմիածնայ վանքը և մատենադարանը, որ աշխարհի ամենահին մատենադարաններից մէկն է, և առանձին համակրանքով պատմեց այն ընդունելութեան մասին, որ ինքն գտել էր Էջմիածնում։ Մատենադարան ցուցահանդէս էր կազմել Էջմիածնայ պարոն [illegible] [illegible]

Վասպուրական (Հաւաճ), Մոկաց և Մուկս). վերջիրդը —Էջմիածնումն է.

XI դարի ձեռագրերից կանոն նայել է 3 հատ. երկու աւետարան և մի հատ ճառընտիր։ Հետաքրքրականն է, որ մի աւետարանի արձանեւ կարգին վրա (աւետարանը գրած է 1035 թ.) 1651 թ. վերադիրական՝ կայ մի խաչ՝ բոլորովին հոմեռական ճաշակով։

XII դարու ձեռագրերից կանոն ուշադրութիւնը գրաւել է մի Աստուածաշունչ՝ զարմանալի գեղեցիկ և մանր տառերով, և մի Աւետարան, որոնց զլխատառերը ասուլին անգամ օգտում են երեւոյ գազանների, թռչունների և ձկների ձևերով։

XIII դարուց սկսվում է արդէն նկատելի իտալական նկարչութեան ազդեցութիւնը հայոց ձեռագրերի վրա, ազդեցութիւնը, որ անշուշտ Լևոնի խաչակիրները իրանց Կիլիկիա եկած ժամանակը բերին գրանից՝ այս դարու ձեռագրերի մասին պ. Աւետնարէր ասաց, որ նրանց նկարները զարմանալի նուրբ և գեղեցիկ են. մանաւանդ սքանչելի են նկարները Ցուցհան արքեպիսկոպոսի (Հեթում թագաւորի եղբօրը), որ իր ժամանակին կարող է համարվել Հենց Եւրոպայումն էլ ամենաերևելի նկարիչներից մէկը։ Այն նրբութիւնը, ձևաքերի ու տարերի այն պատշաճաւոր ներդաշնակութիւնը, (որ ամենադժուար մասն էր նկարչի համար). [illegible]

[illegible] բէնեերից յայտնի է Թ ո ր ո ս վ ա ր դ ա պ ե- տ ը՝ գեղեցիկ պատկերահան և սիրուն տառեր գրող։ Խօսելով XIV դարու մասին, կանոն ուշադրութիւն դարձրեց մի նշանաւոր երևոյթի վրա, որ ամփոփաբար պատահում է հայոց ձեռագրերի մէջ և այդ տառ է մեւս ազգերին։ Հայոց ձեռագրերի նկարների մէջ երևում է ա ս տ ի ճ ա ն ա- բ ա ր զ ա ր գ ա ց ո ւ մ ն ն կ ա ր չ ո ւ թ ե ա ն ա ր ո ւ ե ս տ ի. այնպէս որ՝ օրինակ—XI դարու նկարները աւելի լաւ են, քան X դարունը, XII դարունը—աւելի նուրբ և գեղեցիկ են, քան XI դարունը. XIV դարունը աւելի բարձր են, քան բոլոր անցեալ դարերինը։ Մինչ գեռ այսպիսի աստիճանաբար զարգացումն կարելի չէ նկատել եւրոպական ազգերի միջնադարեան նկարների մէջ։ Այնտեղ շատ յաճախ կարող է պատահել, որ XIV դարու նկարները աւելի վատ են և տգեղ, քան X կամ XI դարերինը։

Արանով վերջացրեց պատուելի ատենախօսը իր հաղորդակցական ընթերցումը։

Պէտք է ասենք, որ կանոն Ոսկանեանը ունէր իր առաջին զանազան նկարներ և ձևեր իր ձեռքով արտանկարած հայոց ձեռագրերից. նա ամեն անգամ ցոյց էր տալիս այդ նկարները, երբ պատմում էր նրանց մասին, և իւրաքանչիւր համեմատական կարող էր միր ասնել և նայել։

Մինչ հայերս շատ շնորհակալ պէտք է լինենք [illegible]

Մոսկվա Գր. Խ.